ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (+374281) 2 25 22**

«11» «06» 2024թ. **N 01/07-2/3896-2024**

«ՀԵՏՔ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ ԱՆՅԱ ՍԱՐԿԻՍՈՎԱՅԻՆ

Հարգելի՛ տիկին Սարկիսովա

Ի պատասխան Ձեր 03.06.2024թ. հարցման՝ տեղեկացնում ենք.

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Արենի և Եղեգիս համայնքներում, 10.06.2024թ. դրությամբ, բնակվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 352 ընտանիք՝ 1326 մարդ: 176 աշխատունակ տարիքի անձ աշխատում է կրթության առողջապահության, գյուղատնտեսության, ծառայությունների և այլ ոլորտներում:

Լեռնային Ղարաբաղից տեղահանված 271 ընտանիք սոցիալապես առավել խոցելի է: Հաշմանդամություն ունի 86 անձ:

2024 թվականի հունվարի 10-ից միչև հունիսի 10 ընկած ժամանակահատվածում մարզից տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղից տեղահանված 71 ընտանիք, 212 անձ: Հունիսի 10-ի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզում նկատվում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության ներհոսք:

Տեղահանված ընտանիքների նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաները ընդունվել են մարզի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններ:

2024-06-11 17:36:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ **Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Կատարող՝ առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչություն, Ց.Բաբայան
Հեռ. /0281/2 44 38
Էլ-փոստ՝ vayotsdzor.social@mta.gov.am